

1.	ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ NATURAL SCIENCES ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ
----	---

**ԳՅՈՒՂԱՏՆԵՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ**

ՀՏԴ 631.47

DOI: 10.56246/18294480-2024.16-40

ԷՖԵՆԴՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳՊՀ և ՀԱԱՀ դասախոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր
Էլփոստ՝ armgeoinfofm@mail.ru

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
Էլփոստ՝ avagyanmartin@rambler.ru

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱԱՀ դասախոս,
տեխնիկական գիտությունների թեկնածու
Էլփոստ՝ tigranhov20@gmail.com

Հողը գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցն է, իսկ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կախված է նրանից, թե որքան արդյունավետ են օգտագործվում հողային ռեսուրսները:

Հողային պաշարները կարևորագույն բնական պաշարներ են, որոնք օգտագործվում են մարդու կողմից: Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, օգտագործման վերաբերյալ փաստացի տվյալների հաշվառումը և արդիական տվյալների բազայի վարումը կարևոր պետական ռազմավարական գործընթացներից է երկրի պարենային անվտանգության ապահովման համար:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների ընթացքում պարզվել է, որ ամեն տարի հրապարակվող հողային

հաշվեկշիռներում արտացոլված տվյալները շատ հաճախ չեն համապատասխանում գյուղատնտեսական հողատեսքերի փաստացի օգտագործման տվյալներին, ուստի հողային ռեսուրսների նպատակային օգտագործման և հողակադաստրային ճիշտ գնահատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել որոշակի հողագիտական, հեղափոխական բնույթի աշխատանքներ՝ հարցը կանոնակարգելու նպատակով:

Շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքում վերջին 25 տարվա ընթացքում գյուղատնտեսական հողատեսքերի առքուվաճառի, վարձակալության, հողերի միավորման և բաժանման, ավանդական և ոչ ավանդական մշակաբույսերի մշակման հետևանքով ձևավորվել են նոր գյուղացիական տնտեսություններ, որոնց տվյալները շատ հաճախ չեն թարմացվում համայնքի հողային հաշվեկշիռներում: Հողային հաշվեկշիռների թարմացման և գյուղատնտեսական ցանքատարածությունների արդի վիճակը բացահայտելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում իրականացնել հեղափոխական բնույթի աշխատանքներ հողակադաստրային անհրաժեշտ տվյալների ձեռքբերման համար:

Քանալի բառեր՝ գյուղատնտեսական հողատեսք, մոնիթորինգ, հողային ռեսուրս, հաշվառում:

Նյութը և մեթոդը

Գյուղատնտեսությունը հանդիսանում է մարդկության տնտեսական գործունեության ամենահին ոլորտներից մեկը, որն իր ուրույն դերն ունի բնակչության կենսաապահովման և զարգացման գործում:

Արարատի մարզի տարածքը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի շուրջ 7%-ը: Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության և բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի և ընդհանրապես ամբողջ հանրապետության հողային ռեսուրսների փաստացի օգտագործման մասին արդիական և անընդհատ թարմացվող տեղեկատվությունը ներկայումս բացակայում է: Հողային ռեսուրսների հաշվառման նպատակով ՀՀ-ում, համաձայն կառավարության որոշման, ամեն տարի վարվում և հրապարակվում է հողային հաշվեկշիռը:

Հողային հաշվեկշիռը հողերի ընթացիկ հաշվառման հիման վրա կազմվող յուրաքանչյուր տարվա հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությունն է:

Հողային հաշվեկշիռը բաղկացած է տեքստից և աղյուսակներից: Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ:

Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հետևյալ փոփոխությունները՝

- ա) հողի սեփականության ձևի,
- բ) հողի օգտագործման ձևի,
- գ) հողի նպատակային նշանակության,
- դ) հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության,
- ե) հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման,
- զ) ոռոգելի, անջրդի, անօգտագործելի և չորացված հողերի վիճակի, պետական սեփականություն հանդիսացող հողերի շարժի և փոխակերպման (տրանսֆորմացիա),
- է) նոր անտառատնկումների և անտառահատումների,
- ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման և վարձակալության իրավունքով տրամադրման տվյալների:


Արդյունքները և վերլուծությունը

Մեր կողմից իրականացված ուսումնասիրություններից և վերլուծություններից պարզվել է, որ ամեն տարի հրապարակվող հողային հաշվեկշիռներում արտացոլված տվյալները շատ հաճախ չեն համապատասխանում գյուղատնտեսական հողատեսքերի փաստացի օգտագործման տվյալներին: Շուկայական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ վերջին 25 տարվա ընթացքում գյուղատնտեսական հողատեսքերի առքուվաճառի, վարձակալության, հողերի միավորման և բաժանման, ավանդական և ոչ ավանդական մշակաբույսերի մշակման արդյունքում ձևավորվել են նոր գյուղացիական տնտեսություններ, որոնց տվյալները շատ հաճախ չեն թարմացվում համայնքի հողային հաշվեկշիռներում:

Արարատի մարզի Սուրենավան բնակավայրում մեր կողմից իրականացված հարցումների, դաշտային աշխատանքների և առկա տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ բնակավայրի հողային հաշվեկշռում գյուղատնտեսական հողատեսքերի մասին արտացոլված տվյալները փաստացի չեն համապատասխանում իրական օգտագործմանը:

Ստորև՝ գծապատկեր 1-ում, ներկայացված է Սուրենավան բնակավայրի հողային հաշվեկշռում գյուղատնտեսական հողատեսքերի տվյալները:

Գծապատկեր 1. Գյուղատնտեսական հողատեսքերի մակերեսները ըստ հողային հաշվեկշռի:



Իրականացված հարցումների արդյունքում սեփականատերերի կամ հողօգտագործողների շուրջ 30%-ի մոտ գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներում նշված գյուղատնտեսական հողատեսքերի գործառնական նշանակությունը չի համապատասխանում տվյալ հողատեսքի փաստացի օգտագործմանը:

Ստորև ներկայացված հողամասերի մասով կատարված հարցումները Կադաստրի կոմիտեից ներկայացված են նկարներ 1, 2 և 3-ում:

Հողամասեր (1)

Հողամաս - 1		
Կադաստրային ծածկագիր		03-086-0184-0001
Մաս - 1		
Նպատակային նշանակություն		Գյուղատնտեսական
Գործառնական նշանակություն կամ հողատեսք		Խաղող
Մակերես		1.409 հա

Նկ.1. Անշարժ գույքի հասցե՝ Մարզ Արարատ, համայնք Արարատ ,գյուղ Սուրենավան:

Հողամասեր (1)

Հողամաս - 1		
Կադաստրային ծածկագիր		03-086-0270-0002
Մաս - 1		
Նպատակային նշանակություն		Գյուղատնտեսական
Գործառնական նշանակություն կամ հողատեսք		Վարելահող
Մակերես		1.9 հա

Նկ. 2. Անշարժ գույքի հասցե՝ Մարզ Արարատ, համայնք Արարատ, գյուղ Սուրենավան:

Հողամասեր (1)

Հողամաս - 1		
Կադաստրային ծածկագիր		03-086-0256-0034
Մաս - 1		
Նպատակային նշանակություն		Գյուղատնտեսական
Գործառնական նշանակություն կամ հողատեսք		Վարելահող
Մակերես		2.20313 հա

Նկ. 3. Անշարժ գույքի հասցե՝ Մարզ Արարատ, համայնք Արարատ, գյուղ Սուրենավան հողամաս:

Նկար 1-ում ներկայացված 03-086-0184-0001 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը խաղողի այգի է, սակայն վերջինիս տեղում շուրջ 14 տարի հիմնված է ծիրանի այգի (նկ. 4):



Նկ. 4. Հատված արբանյակային նկարից:

Նկար 2-ում ներկայացված 03-086-0270-0002 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը վարելահող է, սակայն վերջինիս վրա շուրջ 13 տարի հիմնված է ծիրանի այգի:

Նկար 3-ում ներկայացված 03-086-0256-0034 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը վարելահող է, սակայն վերջինիս վրա շուրջ 5 տարի հիմնված է ծիրանի այգի:


Գծապատկեր 1-ում արտացոլված տվյալներից երևում է, որ 3 տարվա ընթացքում հողային հաշվեկշռում արտացոլված տվյալները ենթարկվել են աննշան փոփոխությունների, սակայն մեր ուսումնասիրությունները և հետազոտությունները ցույց են տվել որ վերջին 5-6 տարիների ընթացքում բնակավայրում ավելացել են բազմամյա տնկարկների փաստացի մակերեսները:

Հետազոտությունների համար օգտագործվել է Sentinel-2A եվրոպական արբանյակի 10 մետր/պիքսել արբանյակային նկարները՝ NDVI վեգետացիոն ինդեքսը հաշվարկելու համար: NDVI-ը հնարավորություն է տալիս հետևելու բույսերի կենսազանգվածի զարգացմանը վեգետացիոն ամբողջ շրջանում:

Բույսերի կանաչ տերևները կլանում են էլեկտրամագնիսական ալիքները կարմիր սպեկտրում և արտացոլում մոտակա ինֆրակարմիրում:

Որքան մեծ է մշակաբույսերի տերևների կանաչ զանգվածի մակերեսայինը և շատ է քլորոֆիլը տերևներում, այնքան բույսերը լավ են կլանում իրենց վրա ընկած կարմիր լույսը ու ավելի քիչ անդրադարձնում այն:

Գունանշատման միջոցով հստակ երևում են այն տեղամասերը, որտեղ առկա է խիտ բուսականություն, և որտեղ է բույսերի աճը կանգնել կամ ընդհանրապես բացակայում է:



**Նկ. 5. NDVI վեգետացիոն ինդեքսի քարտեզը 24.08.2022թ.
դրությամբ:**

Եզրակացություն

Կատարված հետազոտությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ Սուրենավան բնակավայրի օրինակով հողամասերի փաստացի օգտագործման տվյալները ՀՀ-ում ունեն ընթացիկ հաշվառման, արդիականացման և անընդհատ թարմացման կարիք, նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել և ունենալ միասնական հողատեղեկատվական համակարգ:

Ժամանակակից տեղեկատվական համակարգերի կիրառմամբ, ինչպես նաև դաշտային հետազոտական աշխատանքների իրականացմամբ անհրաժեշտ է հավաքագրել և արդիականացնել գյուղատնտեսական հողատեսքերի հաշվառման և փաստացի օգտագործման տվյալները: Առկա են բազմաթիվ դեպքեր, երբ փաստացի բազմամյա տնկարկները հաշվառված են որպես վարելահողեր կամ այլ հողատեսքեր և հարկվում են ըստ հաշվառման, իսկ շատ հաճախ որպես բազմամյա տնկարկ հաշվառված հողամասերը փաստացի օգտագործվում են որպես վարելահողեր և հարկվում են ավելի բարձր արժեքներով:

Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-4C 249 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Էֆենդյան Պ. Ս., Միասնական հողատեղեկատվական համակարգի ստեղծման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Ատենախոսություն տեխ. գիտ. դոկ. 2.01.01, Երևան, 2016, 254 էջ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի նիստի N 656 որոշում «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին»:

3. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, ընդունվել է 2001 թվականի մայիսի 2-ին:

4. Hovhannisyan T. A. Determination of the NDVI vegetation index by remote sensing of the Earth (based on the example of Arzakan community of Kotayk region)// Bulletin of National Agrarian University of Armenia.- Yerevan, 2017.-N4.-P.88-92.

5. Hovhannisyan T. A., Efendyan P., Vardanyan M. The necessity to create a unified land information system in the consolidated communities of RA// Bulletin of National Agrarian University of Armenia.-Yerevan, 2018.-N1.- P.70-73.

6. <https://www.e-cadastre.am/>

7. scihub.copernicus.eu/

EXISTING PROBLEMS OF MONITORING THE ACTUAL USE OF AGRICULTURAL LAND AND ACCOUNTING FOR LAND RESOURCES IN ARARAT MARZ

EFENDYAN PARUYR

Doctor of Technical Sciences, Professor, ANAU

e-mail: armgeoinfo@mail.ru

AVAGYAN MARTIN

Doctor of Agricultural Sciences

Dean of the Faculty of Natural Sciences and

Economics, GSU

e-mail: avagyanmartin@rambler.ru

HOVHANNISYAN TIGRAN

PhD in Technical Sciences at ANUA

e-mail: почта: tigranhov20@gmail.com

Land is the main means of agricultural production, and the volume of agricultural production depends on how efficiently land resources are used.

Land resources are the most important natural resources consumed by people. Efficient use of land resources and accounting for their actual utilization, as well as maintenance of database is the most important strategic measure of the state.

As a result of research and analysis, it was revealed that the data which are published every year, very often do not correspond to the data on the actual use of agricultural land. Therefore, for the targeted use of land resources and correct land

cadastral assessment, it is necessary to carry out certain soil science and research work in order to regulate the issue.

Over the past 25 years, along with the development of market relations as a result of the purchase and sale, lease of a land, consolidation and division of agricultural land, new farms have been formed data on which are very often not being updated in the land balances of communities. In order to update land balances and identify the current state of agricultural sown areas, the need arises to carry out research work to obtain the necessary land cadastral data.

Keywords: *agricultural land, monitoring, land resource , accounting.*

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УЧЁТА ЗЕМЕЛЬНЫХ РЕСУРСОВ И
МОНИТОРИНГА УГОДИЙ ФАКТИЧЕСКОГО ИСПОЛЬЗОВАНИЯ, ИМЕЮЩИХ
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЕ НАЗНАЧЕНИЕ В АРАРАТСКОМ РЕГИОНЕ**

ЭФЕНДЯН ПАРУЙР

Преподаватель ГГУ и НАУА

Доктор технических наук

Электронная почта: armgeoinfofm@mail.ru

АВАГЯН МАРТИН

Доктор сельскохозяйственных наук

Декан факультета естественных наук ГГУ

электронная почта: avagyanmartin@rambler.ru

ОГАННИСЯН ТИГРАН

кандидат технических наук НАУА

электронная почта: tigranhov20@gmail.com

Земля является основным средством сельскохозяйственного производства, а объем сельскохозяйственного производства зависит от того, насколько эффективно используются земельные ресурсы.

Земельные ресурсы являются важнейшими природными ресурсами, используемыми человеком. Эффективное использование земельных ресурсов и учет фактических данных об использовании и управлении актуальной базой данных, является одним из важных стратегических процессов государства.

Земельные ресурсы наиважнейшие природные ресурсы. Именно поэтому они являются одним из основных ресурсов, нуждающихся в постоянном учете. Эффективное использование земельных ресурсов и учет данных об

использовании и управлении базой данных является одним из важных стратегических процессов государства.

В результате проведенных нами исследований и анализов выяснилось, что данные, отраженные в ежегодно публикуемых земельных балансах, зачастую не соответствуют данным по фактическому использованию сельскохозяйственных угодий.

Наряду с развитием рыночных отношений за последние 25 лет в результате купли-продажи, аренды сельскохозяйственных угодий, объединения и разделения земель, возделывания традиционных и нетрадиционных культур сформировались новые сельские хозяйства, данные которых очень часто не обновляются в земельных балансах общины.

Ключевые слова: *земли сельскохозяйственного назначения, мониторинг, земельный ресурс, учет.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.08.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 13.09.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: